



ԲԱԶՄԱՄԱԿԷՊ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 4 .

1851

ՓԵՏՐՈՒԱՐԻ 15 .

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ

ԳԼՈՒԽ ԻԴ .

Հայրական սեր : — Տղայ լրայ սեր :

Թի որ զաւկըներ ունենաս , քու պարտքդ պիտի ըլլայ զանոնք իբրև ընտիր քաղաքացիներ հայրենեացդ ընծայել , մանաւանդ թէ Բոստուծոյ ալ իրեն արժանի ազնիւ հոգիներ ընծայել : Գերազանց պարտք : Եւ որ աս պարտքը վրան կ'աւնէ ու չի կատարեր՝ հայրենեաց և Բոստուծոյ մեծ թշնամի է :

Հարկ չէ մէկիկ մէկիկ համրել մէկ հօր մը պէտք եղած առաքինութիւնները . դուն անոնք ամէնն ալ կ'ունենաս՝ թէ որ լաւ որդի ու լաւ ամուսին եղած ըլլաս : Ինոնք որ գէշ հայր են՝ ամէնքն ալ ապերախտ որդիք ու վատ ամուսինք եղած են :

Իսկ որդւոց տէր ըլլալէդ ալ առաջ կամ թէ ըլլալու միտք չունիս նէ ալ , ազնուացուր քու սիրտդ հայրական սիրոյն անոյշ զգացմունքովը : Իմէն մարդ ալ պիտի ունենայ աս զգացմունքը՝ ամէն տղոց և ամէն պատանեաց վրայ դարձնելով :

Եւ սիրով նայէ այն մարդկային ընկերութեան նոր մասին վրայ , մեծ համարմամբ նայէ :

Եւ որ կ'արհամարհէ կամ անիրաւ տեղը տղոց սիրտը կը ցաւցընէ , անպիտան մարդ չէ ալ նէ՝ անպիտան կ'ըլլայ : Եւ որ սաստիկ փոյթ չունենար տղու մը անմեղութեանն պատկառելու , ա-

նոր չարութիւն չսորվեցընելու , ար-
թուն կենալու որ ուրիշները չարութի
չսորվեցընեն , ջանալու որ միայն առա-
քինութեան սիրովը վառուի անիկայ ,
կրնայ պատճառ ըլլալ որ այն տղան
հրէշ մը դառնայ : Եւ այց ինչու այսպիսի
անգոր խօսքեր բանեցընեմ ու թողում
այն ահաւոր ու ամենասուրբ խօսքերն
որ ըսաւ փրկիչն մեր , տղոց երկրպագե-
լի բարեկամը . — “ Ո՛վ որ այսպիսի
” տղայ մը իմ անունովս ընդունի , ը-
” սաւ , զիս կ'ընդունի . բայց ո՛վ որ աս
” ինծի հաւտացող սղտիկներէն մէկուն
” գայթակղութեան պատճառ ըլլայ ,
” լաւ էր այնպիսեղոյն որ վղէն ջաղացքի
” քար մը կապէին ու ծովը ձգէին ” :

Որոնք որ քեզմէ քանի մը տարի պըղ-
տիկ են , որոնք որ այն պատճառաւ քու
օրինակիդ ու խօսքիդ կրնան հետեւիլ ,
դուն զիրենք քու զաւակացդ տեղը սե-
պէ . հետերնին այնպիսի ներողամտու-
թեամբ ու միանգամայն անաչառու-
թեամբ վարուէ՝ որով կրնաս չարէն զի-
րենք հեռացընել ու ՚ի բարին յորդորել :

Տղաք բնութեամբ ինչ որ տեսնեն՝
ան կ'ընեն . թէ որ տղու մը չորս դին
գտնուող չափահասները բարեպաշտ ,
ծանրակաց , բարեսիրտ են , տղան ե-
տեւէ կ'իյնայ անանկ ըլլալու , և կ'ըլ-
լայ : (Ի)է որ չափահասները հաւատոյ
բաներուն պաղ , ցած , ու չարասիրտ
են , տղան ալ անոնց պէս անպիտան
մարդ մը կ'ըլլայ :

Եւ այն տղոց ու պատանեաց հետ
ալ աղէկ վարուէ՝ որ շատ անգամ չես
տեսներ , ու թերեւ կենացդ մէջ մէկ
անգամ մը միայն առիթ պիտի ունենաս
հետերնին խօսելու . թէ որ տեղը գայ՝
առաքինութիւն սորվեցընող խօսք մը
ըսէ իրենց : Եւ քու խօսքդ , այն հա-
մեստ նայուածքդ կրնայ զիրենք ցած
մտածութենէ մը հանել , կրնայ սրտեր-
նին վառել որ լաւ մարդկանց համար-
մանը արժանի ըլլալու աշխատին :

(Ի)է որ պատանի մը , որուն վըայ յոյս
կայ երեւելի մարդ ըլլալու , քու վըադ
դնէ իր վստահութիւնը , մտերիմ բա-
րեկամ եղիւ իրեն , ուղիղ և խելացի

խրատներով օգնէ իրեն . ամենեւին մի
չողոքորթեր զինքը , գովելի գործքերը
գովէ , բայց անվայելները սաստիկ պար-
սաւներով վար զարկ :

(Ի)է որ պատանի մը տեսնես որ մո-
լութեան ետեւէ է , թէպէտ և հետը
մտերիմ ընտանութիւն չունենաս՝ տե-
ղը եկած ատենը մի քաջուիր ձեռքդ
երկընցընելու և զինքը ազատելու : Եւ
բեմն այն տղան որ չար ճամբան բռներ
կ'երթայ՝ մէկ կանչելու մը՝ մէկ ակնար-
կութեան մը միայն կը կարօտի որ ա-
մընայ ու դառնայ ուղիղ ճամբան մտնէ :

Երդեօք քու զաւակացդ ինչ կրթու-
թիւն պիտի տաս . — աս բանս չես
կրնար հասկընալ՝ ինչուան որ աղէկը
դուն չունենաս : Եւ անցիր , որ կարե-
նաս նաեւ տալ :

ՓԵՂԼԻԿՈՅ

ՆԿԱՐԱԳԻՐ

ՉԳԳԻՂ ԲՆՈՒԹԻՒՆ :

ՉԳԳԻՂ ԲՆՈՒԹԻՒՆԸ ծուլութե-
նէ քիչ տարբերութիւն ունի . բայց
այսպէս կը տարբերի . ծոյը ամենեւին
չուզեր , ու միտք չունի գործք մը ընե-
լու , ձգձգողը կ'ուզէ , միտք ունի՝ բայց
միշտ վաղուան կը ձգէ , կը կարծէ որ
վաղը աւելի դիւրութեամբ պիտի ընէ
ընելու գործքը , կամ թէ առանց աշխա-
տելու : Եւ գործք ընելու վըայ խօսք
բանաս , կենանք մինչև սա զբաղմունք-
ները անցնի կ'ըսէ . չի մտածէր որ զբաղ-
մունքները անցնելիք չունին՝ քանի որ
կ'ապրինք . ուստի ըսել է որ միտք չու-
նի ան գործքը ընելու :

Կործքին դժուարութիւնները միայն
կը մտածէ , ոչ երբեք դժուարութիւն
ներուն դեղը , որոնց մէկն ալ սկսին է .
ինչպէս առաւին ալ կ'ըսէ որ “ Կործքի
մը սկսելու գործքին կէսն է ” : Երդէն
մարդս իր բոլոր կեանքը մտածելով
կ'անցընէ , ու մտածածներուն մեծ մա-
սը առանց ՚ի գործ դնելու կը մեռնի .